«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՍԱՐԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2021թ.

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

- Շահագործման թույլտվություն ՇԱԹՎ-29/094 16.08.2012թ.
- Ընդերքօգտագործման պայմանագիր՝ 16.08.2012թ. ՊՎ-094
- Շահագործման ժամկետը՝ 21.04.2008թ-ից 18.2 տարի մինչև 14.08.2032թ., վերակնքվել է 02.07.2015թ.
- Հանքի մակերեսը՝ 20,58 հա
- Հանքաքարի հաստատված պաշարը՝ հանքաքար 2762,4 հազ.տ, պղինձ՝ 13 582,3տ, մոլիբդեն՝ 5640,8տ
- Տարեկան թույլատրելի ծավալը՝ 150,0 հազ. տ
- ՇՄԱԳ փորձաքննություն՝ ձեռնարկության նախագծի բնապահպանական փորձաքննության անցկացման համարը և տրման տարեթիվը՝
  ստորգետնյա հանք - ԲՓ - 17, 14.03.2008թ.
  հարստացուցիչ ֆաբրիկա - ԲՓ - 49, 20.06.2011թ.:

Ընկերությունն ունի հարստացուցիչ ֆաբրիկա և պոչամբար: Ընկերությունը 2012 թվականին գնվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) ՓԲԸ-ի կողմից, սակայն հանքավայրը չի շահագործվել, իսկ ֆաբրիկայում վերամշակվել է օրական 1200-1400 տոննա քանակով Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրից բերված հանքաքարը: 2014 թվականից «Լեռ-էքս» կոմբինատը փակվել է, որի հիմնական պատճառը եղել են կոմբինատի պարզվածքի համար նախատեսված տեխնիկական խախտումները, ինչի արդյունքում այն կարող էր պայթել և վնասել հարակից տարածքները՝ ողողելով պոչամբարի ջրերով: Խողովակաշարն սկսվում է Նոր Աստղաբեր համայնքի տարածքից, տրամագիծը ոչ մեծ է և կոմբինատի պոչամբարի պարզվածքի ջրերը Գեղիի ձորով տանելու էր մինչև Լեռնաձոր համայնք: Այնտեղից այն միանալու էր ԶՊՄԿ-ի պոչատարին, որով էլ խառնուրդը թափվելու էր Արծվանիկի պոչամբար:

Ընկերությունն ունի նաև ջրօգտագործման թիվ 000311 թույլտվությունը, համաձայն որի հարստացուցիչ ֆաբրիկան պետք է աշխատեր ջրօգտագործման լրիվ շրջանառու համակարգով: Սակայն այդ համակարգը տեխնիկական-կազմակերպչական տարբեր պատճառներով չի գործել, ինչի հետևանքով պոչամբարի պարզված ջրերը լցվել են Գեղի գետը:

Համաձայն հարստացուցիչ ֆաբրիկայի աշխատանքային նախագծի փորձաքննական եզրակացության՝ պոչամբարի պարզված ջուրը պետք է կոլեկտորով ուղղվի շրջանառու ջրի համար նախատեսված պոմպակայան և մղվի հարստացման գործընթացի գլխամաս, իսկ պոչամբարի պարզվածքը և ինֆիլտրացիոն ջրերը հավաքվեն խյուսափոսում և մղվեն հարստացուցիչ ֆաբրիկա:

«Լեռ-էքս» ընկերությունը, համարելով, որ հանքավայրի ստորերկրյա եղանակով շահագործումը տնտեսապես ձեռնտու չէ, 2015թ. ներկայացրել է հանքավայրի երկրաբանական հետազոտությունների իրականացման հայտ, նպատակ ունենալով հայտնաբերել բաց եղանակով շահագործման համար պիտանի շտոկվերկային բնույթի հանքային գոտիներ, որոնք հնարավորություն կտային հանքավայրում իրականացնել կոմպլեքս՝ բաց և ստորգետնյա եղանակներով հանքավայրի շահագործումը: ՀՀ

բնապահպանության նախարարությունը 14.12.2015թ. տվել է ««Լեռ-էքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Հանքասարի պղինձ-մլիբդենային հանքավայրում 2015-17թթ ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նախնական հայտի գնահատման վերաբերյալ» ԲՓ 92 դրական եզրակացությունը:

Ըստ Նոր Աստղաբերդի բնակիչների՝ «Լեռ-էքս» ՍՊԸ-ն ապամոնտաժել է ֆաբրիկան, մնացել է միայն կարկասը:

2020թ. դեկտեմբերին Ընկերությունը Քաջարան համայնքում անցկացրել է Հանքասարի պղնձամոլիբդենային հանքավայրի փակման ծրագրի վերաբերյալ հանրային քննարկում: Ծրագիրը դեռ բնապահպանական փորձաքննության գործընթաց չի անցել:

Ազդակիր համայնքների մասին

Ազդակիր է Քաջարան համայնքը՝ Լեռնաձոր և Նոր Աստղաբերդ բնակավայրերը:

Լեռնաձոր բնակավայր

Բնակչությունը՝ 344 մարդ, որից 155 արական, 189 իգական:

Գյուղում կա երկու եկեղեցի, որից սուրբ Աստվածածինը (17 դ.) կանգուն է, իսկ սուրբ Գևորգ եկեղեցին (12դ.) կիսաքանդ է: Գործում է «Լեռնաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը: Դպրոցը նախատեսված 192 աշակերտի համար, ունի վերանորոգման կարիք: Ներկայումս դպրոցում սովորում է 42 աշակերտ: Գյուղում գործում է «Լեռնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը: Մանկապարտեզը նախատեսված է 30 երեխայի համար: Մանկապարտեզը մասնակի վերանորոգման կարիք ունի, ներկայումս ունի 10 սան:

Գյուղի աշխատանքային տարիքի բնակչության զգալի մասն աշխատում է ԶՊՄԿ ՓԲԸ-ում, համայնքի տարածքում գործող հիմնարկ–ձեռնարկություններում, մի մասը ինքնազբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով:

Տնտեսության հիմնական ուղղությունը գյուղատնտեսական է՝ անասնապահություն և դաշտավարություն:

Լեռնաձոր բնակավայրն ունի 15808 հա հող՝ այդ թվում՝գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9184 հա, որից 66 հա-ն վարելահող, 294 հա-ն խոտհարք, 3294 հա-ն արոտ, այլ հողատեսք՝ 5530 հա-ն բնակավայրերի հողեր, 208 հա-ն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 498 հա, անտառային հողեր՝5578 հա, որից անտառածածկ՝4042 հա, ջրային հողեր՝ 160 հա:

Հողագործության և այգեգործության արդյունքում ստացված արտադրանքը հիմնականում ներքին սպառման և փոխանակման համար է: Համայնքի որոշ գյուղացիական տնտեսություններ զբաղվում են մանր եղջերավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ և մեղվաբուծությամբ, որոնք իրենց արտադրանքը սպառում են հանրապետության շուկաներում:

Նոր Աստղաբերդ բնակավայր

Գյուղի բնակչության թիվը կազմում է 49 մարդ, որից արական սեռի ներկայացուցիչներ՝27, իգականը՝22 մարդ, թոշակառու 7 հոգի:

Բնակելի տների թիվը՝ 21։

Չունի դպրոց և մանկապարտեզ։

Տնտեսությունը՝ գյուղատնտեսական, գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունը և դաշտավարությունը։

Նկար 1. Նոր Աստղաբերդ բնակավայր

Հողեր (ընդամենը)՝ 11201 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7934 հա, որից՝ վարելահող՝ 7 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 52 հա, արոտ՝ 4971 հա, այլ հողատեսք՝ 2901 հա, բնակավայրերի հողեր՝ 69 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 50 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 9 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2638 հա, անտառային հողեր՝ 463 հա, որից անտառածածկ՝ 285 հա, ջրային հողեր՝ 38 հա։

Հողերի անջրդիության պատճառով նվազել են գյուղացու եկամուտները։

Բնակավայրերի խնդիրներն են՝ աղքատությունը, կախվածությունը հանքարդյունահանման ճյուղից, բնակչության արտագաղթը, կանանց գործազրկության բարձր մակարդակը, ջրամատակարարման համակարգերի վատ վիճակը, օդի, ջրի, հողի աղտոտվածությունը, ժամանակակից ենթակառուցվածքների բացակայությունը, անբարեկարգ ճանապարհները և միջբնակավայրային տրանսպորտի բացակայությունը, խախտված լեռնանտառային լանդշաֆտների վերականգնումը, տարածաշրջանում վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների առկայությունը։

Քաջարան համայնք

2017թ նոյեմբերի 1-ի դրությամբ Քաջարան համայնքի մշտական բնակչությունը կազմել է 8145 մարդ, որից 7000-ը Քաջարան քաղաքի բնակչությունն է։ Աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 57%-ը (մոտ 4650 մարդ), որից 23%-ը աշխատանք չունի։

Նկար 2. Քաջարան քաղաքային համայնք

Աշխատանք չունեցողների գերակշռող մասը կանայք են, քանի որ կանանց համար նախատեսված աշխատատեղերը քիչ են: Աշխատողների 75%-ը զբաղված են լեռնահանքային արդյունաբերությունում (ԶՊՄԿ ՓԲԸ աշխատակիցներն են), 10%-ը՝ մասնավոր այլ ձեռնարկություններում և գյուղատնտեսությամբ, 15%-ը՝ պետական և համայնքային կառույցներում: Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա. ոչ լեռնահանքային արդյունաբերության մասնագիտություն ունեցողները, հատկապես երիտասարդները, հեռանում են համայնքից իրենց ընտրած մասնագիտությամբ այլ համայնքներում աշխատանք գտնելու ակնկալիքով: Համայնքում գործում է յոթ հանրակրթական դպրոց, որոնցից 5-ը միջնակարգ, 2-ը՝ հիմնական: Աշակերտների թիվը՝ 1130: Քաղաքում գործում է հիվանդանոց, պոլիկլինիկա, համայնքի 4 բնակավայրերում կան բուժսպասարկման կենտրոններ[1]: Համայնքի զարգացման ռիսկերն են՝

1. Համայնքի տնտեսության միաբևեռությունը
2. Լեռնահանքային ձեռնարկությունների գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա
3. Բնական աղետների և էկոլոգիական ռիսկերի բարձր մակարդակը

4. Համայնքաստեղծ ձեռնարկության փակվելը կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելը
5. Օրենքների հաճախակի փոփոխությունները
6. ՏԻՄ լիազորությունների անբավարարությունը խնդիրների լուծման համար:

«ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ–Ի ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ[2]

«Լեռ-Էքս» ՍՊԸ-ն գրանցվել է 23.08.1999թ., գրանցման համարն է՝ 27.110.00893:

---

[1] Տեղական տնտեսական զարգացման պլան Քաջարան համայնք, Քաջարան 2020

[2] *https://www.e-register.am/am/*՝

1-ին իրական սեփականատերը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Միեր Պոլոսկովն է: Նա «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենն է: Ընկերության բաժնեմասերի 7,5%-ը ձեռք է բերել 20.06.2018 թվականին:

2-րդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Գուրգեն Սմբատյանն է: Ընկերության բաժնեմասերի 2,5%-ը ձեռք է բերել 04.12.2020 թվականին:

3-րդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Կարեն Հակոբյանն է, կրկին 2.5 տոկոս բաժնեմասով, որը նա ձեռք է բերել 2018 թ-ի հունիսի 20-ին: Որպես նրա աշխատանքի վայր նշված է ՀՀ-ում գտնվող «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն:

4-րդ իրական սեփականատերը Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) քաղաքացի Միխայիլ Զուրաբովն է, ով դարձել է Ընկերության 12.5 տոկոսի սեփականատեր 2020 թ-ի փետրվարի 3-ին: Զուրաբովն աշխատում է ՌԴ-ում գտնվող «Մոսկովյան բաժնետիրական ապահովագրական ընկերություն» ԲԸ-ում:

5-րդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Սուրեն Ոսկանյանն է, ում բաժնեմասերի քանակի վերաբերյալ տվյալները բացակայում են: Որպես նրա աշխատանքի վայր նշված է «Լեռ էքս» ՍՊԸ-ն:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հանդիսանում է իր կողմից թողարկված բաժնետոմսերի 75%-ի սեփականատերը:

Սեփականատերերի միջանկյալ ընկերությունները և շղթայի տեսակները

Առաջին 4 իրական սեփականատերերն Ընկերությունում ունեն անուղղակի մասնակցություն: Նրանց մասնակցությունն ապահովվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջոցով:

Միեր Պոլոսկովի, Գուրգեն Սմբատյանի ու Կարեն Հակոբյանի դեպքում որպես միջանկյալ ընկերություն գործում է Հայաստանում գտնվող «Ամփ Հոլդինգ» ՍՊԸ-ն (Գործադիր տնօրեն Ավետիք Հովիկյան)՝ «Մուն Մեթալս» ՍՊԸ-ի միջոցով:

Նրանց համար որպես միջանկյալ իրավաբանական անձ է գործում «Սթար Դասթ» ՓԲԸ-ն: Այդ կազմակերպության կանոնադրական կապիտալում նրանք ունեն ուղղակի մասնակցություն:

4-րդ իրական՝ անուղղակի մասնակցությամբ սեփականատեր Միխայիլ Զուրաբովի համար որպես միջանկյալ ընկերություն գործում է Հայաստանում գտնվող «Զանգեզուր Մայնինգ» ՍՊԸ-ն (գործադիր տնօրեն Վյաչեսլավ Գայնոչենկո) և Կիպրոսի Հանրապետությունում գտնվող «Վոլնըրթ Ֆայնենս Լիմիթեդ»-ը (Գործադիր մարմնի ղեկավար՝ Բեռնարդ Ռայմոնդ Չառլզ Ժոզեֆ Վաննիեր)՝ «Մուն Մեթալս» ՓԲԸ-ի միջոցով:

2. «Լեռ-էքս» ՍՊԸ-ի սոցիալական, բնապահպանական պարտավորություններն՝ ըստ 16.08.2012թ. ՊՎ-094 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

16.08.2012թ. ՊՎ-094 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ նախատեսված չեն:

2.1.1 16.08.2012Թ. ՊՎ-094 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքների նկատմամբ սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

Ըստ Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարության ԱՃԹՆ շրջանակներում հրապարակված հաշվետվությունների՝ Նոր Աստղաբերդ (խոշորացումից հետո Քաջարան համայնք) համայնքին որևէ սոցիալական կամ բարեգործական աջակցություն չի ցուցաբերել:

2. 2. Բնապահպանական պարտավորություններ

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է.

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:
4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:

5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.1. Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

- Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը, քանի ՀՀ բնապահպանության նախարարությունը չի սահմանել մշտադիտարկման վճարի չափը:
- Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ չի վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի չի դարձրել տնտեսության մեջ օգտագործելու համար:
- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային ստորաբաժանման աշխատակիցները 2014 թվականին «Լեռ-էքս» ՍՊԸ-ի կողմից արտադրական կեղտաջրերով Գեղի գետի Օդաբարա վտակի աղտոտման ուսումնասիրության արդյունքում հաշվարկել են 178.5 հազար դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:
- Ըստ 2021թ. հունվարին ազդակիր բնակավայրերի բնակչության շրջանում էկոԼուրի անցկացրած հարցումների, «Լեռ-էքս»-ի կողմից հանքավայրի շահագործման ժամանակ պոչամբարից տհաճ հոտ էր տարածվում, այնտեղից Գեղի գետ արտահոսքերի հետևանքով գետի գույնը մշտապես ունեցել է դեղին կամ կաթնավուն գույն:

Նկար 3. Հանքասարի պոչամբար

3. Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

Հանքի փակման աշխատանքներ

Ընդերքօգտագործման պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքներ, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է: Միաժամանակ, ընդերքօգտագործման հայտի քննարկման գործընթացում չեն պահանջվել հանքի փակման ծրագիրը, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի զ) ենթակետի խախտում է: 2020թ. դեկտեմբերի 29-ին Քաջարանի համայնքապետարանում հանրային քննարկման է ներկայացվել հանքի փակման ծրագիրը:

4. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալները [3]

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Պղնձի հանքաքար և խտահանքեր, մոլիբդենի խտանյութ	0	0	0
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 0, Վճր. 0, Հշվնց. -50000 (բացաս. հաշվեկշռով)	Հշվրկ. 0, Վճր. 0, Հշվնց. 0	Հշվրկ. 0, Վճր. 0, Հշվնց. 0
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 84439503 Վճր. 110388918 -324 (բացաս.	Հշվրկ. 56371434 Վճր. 54737055 Հշվնց. 0	Հշվրկ. 91263436 Վճր. 56512080 Հշվնց. 0

[3] https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf

	հաշվեկշռով)		
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 66118873 Վճր. 0, Հշվնց. 0, Վրդրձ. 0	Հշվրկ. 189032689 Վճր. 41921, Հշվնց. 0, Վրդրձ. 0	Հշվրկ. 84525511 Վճր. 12557624 , Հշվնց. 0, Վրդրձ. 0
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0
Ռոյալթի, դրամ	Հշվրկ. 0, Վճր. 0, Հշվնց. 0 Վրդրձ. 87258644	Հշվրկ. 0, Վճր. 0, Հշվնց. 0, Վրդրձ. 0	Հշվրկ. 0. Վճր. 0, Հշվնց. 0, Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0
Բնապահպանական վճարներ, դրամ	Հշվրկ. 34200 Վճր. 34200	Հշվրկ. 29925 Վճր. 34200	Հշվրկ. 18812 Վճր. 18384
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0	Հշվրկ. 0, Վճր. 0
ՇԹ պետտուրք, դրամ	Հշվրկ. 10000000 Վճր. 0	Հշվրկ. 10000000 Վճր. 0	Հշվրկ. 10000000 Վճր. 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	0	0	0
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	0	0	0
Գույքահարկ դրամ (Կապան) Գույքահարկ դրամ (Քաջարան)	Հշվրկ. 296036 Վճր. 298696 Հշվրկ. 36300 Վճր. 36300	Հշվրկ. 206361 Վճր. 255961 Հշվրկ. 36300 Վճր. 36300	Հշվրկ. 196836 Վճր. 196836 Հշվրկ. 36286 Վճր. 18143
Հողի հարկ դրամ (Քաջարան)	Հշվրկ. 35981 Վճր. 35981	Հշվրկ. 35976 Վճր. 35976	Հշվրկ. 25218 Վճր. 12609
Վարձակալություն, (Հողամաս, Քաջարան), դրամ	Վճարված՝ 1538820	Վճարված՝ 1538800	Վճարված՝ 1538700
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն	0	0	0
Բարեգործական հատկացումներ	0	0	0
Ֆինանսական և ոչ ֆինանսական օգն.	5000000 (Արարատյան հայրապետական թեմ՝ ֆինանսական) 10000000 (ՀՀ	0	0

	անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամ՝ ֆինանսական)		
Աշխատատեղեր	90 մարդ (անժամկետ)	47 մարդ (անժամկետ)	58 մարդ (15 անժամկետ, 43 ժամկետային)
Անհատույց օտարումներ	0	0	0

5. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, 2018թթ. համար

2016-2018թթ. Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵ) նախարարության հաշվետվությունների մեջ չկան էական տարբերություններ:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի բազային մեծությունն, ըստ Շրջակա միջավայրի նախարարության ԱՃԹՆ 2016թ. հաշվետվության, կազմում է 31278420 դրամ[4], որից հաշվետու տարվա համար վճարման ենթակա գումարը կազմել է 1107780 դամ, ինչը սակայն չի վճարվել: 2017-2018թթ. համար ևս դրամագլխի համալրման հաշվարկային չափը կազմել է 1107780-ական դրամ, ինչը չի վճարվել: Մինչդեռ այդ բաղադրիչի հաշվարկային չափը չի նշվում Ընկերության հաշվետվություններում:

Հարկերի մասով Ընկերության և Պետական եկամուտների կոմիտեի[5] ԱՃԹՆ հաշվետվությունների մեջ կան էական տարբերություններ: Մասնավորապես, 2016թ. և 2017թ. Պետական եկամուտների կոմիտեի հաշվետվության մեջ նշված է, որ Ընկերությունն այդ տարիներին վճարել է ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության (ՇԹ) տրամադրման համար նախատեսված պետական 10000000 դրամ տուրքը, իսկ Ընկերության հաշվետվություններում նշվում է, որ չի վճարել: Տարբերություններ կան նաև եկամտահարկի մասով: 2017 թվճարել է 54737055 դրամ եկամտահարկ, ըստ Պետական եկամուտների կոմիտեի՝ 55589032 դրամ [6]:

6. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Լեռ-էքս» ՍՊԸ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 2016-2018 թվականներին բնապահպանական վճար չի վճարել պետական բյուջե:

Մինչ 2020 թ-ը «Լեռ-էքս» ՍՊԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում,

[4] https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=1
[5] https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/
6 https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3

ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Քաջարան համայնքը չի կարողացել օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը,[7] ըստ որի՝ այնտեղ ընդգրկվեցին բոլոր մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները: Այսինքն, եթե որևէ ձեռնարկություն ստանա Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի շահագործման թույլտվությունը, նրա վճարած բնապահպանական հարկերից ազդակիր համայնքը բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով կստանա օգտվելու իրավունք:

7. Համայնքային զարգացման ծրագրերում «Լեռ-էքս » ՍՊԸ-ի ներգրավվածության մասին

Ինչպես հետևում է **Լեռնաձոր համայնքի** 2017-2021թթ. զարգացման ծրագրից,[8] գյուղում նախատեսվում է հանդիսությունների դահլիճի կապիտալ վերանորոգում և գյուղի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում: Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների մի մասը նախատեսվում է համայնքի բյուջեից, իսկ մյուս մասը՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ: Որպես համայնքի թույլ կողմ նշված է կախվածությունը համայնքին մոտ գործող արդյունաբերական մասնավոր ընկերությունից՝«ԶՊՄԿ» ՓԲԸ-ից, խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը, ճանապարհամերձ հատվածում քարաթափումների վտանգը, «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի չգործող երեք պոչամբարների առկայությունը, էկոլոգիական աղտոտվածությունը /համայնքը նաև «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի ազդակիր համայնք է/: Որպես շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառում՝ զարգացման ծրագրով նախատեսվում է կանաչապատ տարածքների ընդլայնում: «Բնակավայրերի կանաչապատում» ծրագիրը կիրականացվի Լեռնաձորին՝ որպես ԶՊՄԿ-ի ազդակիր համայնք տրամադրվող բնապահպանական վճարներից: Հատկանշական է, որ «Լեռ-էքս» ՍՊԸ-ի գործոնը համայնքի զարգացման ծրագրում հաշվի առնված չէ:

Չնայած նրան, որ զարգացման ծրագրում Լեռնաձորի բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը և մշակութային արժեքների առկայությունը /հին եկեղեցիներ, բերդեր բնակավայրեր/ դիտարկվում է որպես զբոսաշրջության զարգացման հնարավորություն, իսկ խոտհարքների և արոտավայրերի առկայությունը, որպես գյուղում անասնապահության զարգացման հիմք, այնուամենայնիվ, բացակայում են այդ ներուժի օգտագործմանը միտված ծրագրեր:

Նոր Աստղաբերդ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրում նշվում է, որ համայնքի ձեռնարկություններն են «Լեռ-Էքս-Էներգիա» ՍՊԸ-ն, որն արտադրում է էներգիա և սպառումը իրականացնում է տեղում: Իսկ «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն, որի աշխատանքները այս պահի դրությամբ դադարեցվել են և, որը արդյունահանում և մշակում էր պղինձ-մոլիբդեն: Գյուղի զարգացման ծրագրով որևէ աջակցության այս ընկերության կողմից չի նշվում, իսկ լեռնահարստացման լիցենզիա ձեռք բերած «Գեղի Գոլդ ՍՊԸ-ից

7 https://www.arlis.am/
8 http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer , 24661 (3).zip - ZIP archive, unpacked size 340 793 bytes/

ակնկալվում է համայնքային բյուջե մուտքերի ապահովում՝ համայնքի հետ կնքվելիք սերվիտուտի պայմանագրերից[9]:

Քաջարան քաղաքի զարգացման հնգամյա ծրագրում[10] նշվում է, որ քաղաքի զարգացման ուղղությունը միաբևեռ՝ լեռնահանքային արդյունաբերության է, և որ տարածաշրջանում առկա հարուստ հանքային ռեսուրսները ոչ միայն Քաջարանի, այլև հարակից տարածքների տնտեսությունները երկար ժամանակաընթացքի համար կկողմնորոշեն դեպի լեռնահանքային արդյունաբերություն՝ սրանից բխող դրական և բացասական հետևանքներով: Տնտեսության մյուս ճյուղերը ուղղակիորեն կամ անուղղակի կապված են և հետագայում էլ կապված կլինեն լեռնահանքային արդյունաբերության հետ: 2016թ օրինակով շեշտված է, որ քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտների մոտ 20%-ը ապահովվում է ԶՊՄԿ ՓԲԸ-ի կողմից պայմանագրային հիմունքներով տրամադրվող նպատակային հատկացումներով: Միաժամանակ նշվում է, որ համայնքի սեփական եկամուտների մեծ մասը ձևավորվում է համայնքի հողի նկատմամբ կառուցապատման իրավունքի համար ԶՊՄԿ ՓԲԸ-ի և այլ իրավաբանական անձանց կողմից կատարվող վարձավճարներից: Որպես սպառնալիք նշվում է ԶՊՄԿ-ի գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Քաղաքի զարգացման Ծրագրում մեծ տեղ է հատկացված շրջակա միջավայրի պահպանությանը, մասնավորապես՝ շրջակա միջավայրի դեգրադացիայի կանխարգելմանը, էկոլոգիական անվտանգության ապահովմանը և էկոկրթական միջավայրի բարելավմանն ուղղված գործողություններին, սակայն «Լեռ- էքս» ՍՊԸ-ի մասին չի նշվում:

8. Ընկերության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար գումարների ներդրման, բնապահպանական և բնօգտագործման հարկերի, պարտադիր այլ վճարների և տուրքի մարման կատարման բնութագիրը[11]

Ըստ Ընկերության ներկայացրած հաշվետվության՝ 2016-2018թթ. արդյունահանում չի իրականցրել:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի նախատեսված բազային չափը կազմել է 31278420 դրամ դրամ: 2016-2018թթ. այդ գումարի չափը կազմում է 3323340 դրամ, որից որևէ վճարում չի կատարվել:

Մշտադիտարկումների իրականացման բազային չափը չի սահմանվել, Ընկերությունն այդ մասով ոչինչ չի վճարել:

Ռոյալթի չի վճարել, իսկ նախկինում կատարված վճարումներից 2016 թվականին Ընկերությանն է վերադարձվել 87258644 դրամը:

Բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

---

[9] http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/, 24646 (2).zip - ZIP archive, unpacked size 145 013 bytes

[10] http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24592.zip\Քաջարան\Քաջարան - ZIP archive, unpacked size 1 111 070 bytes

[11] https://reports.eiti.am/hy/report/s earch/company-pdf/?year=2017&company=17

Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն դրամ պետական տուրքը վճարել է՝ ըստ Պետական եկամուտների կոմիտեի հաշվետվության:

Չի վճարել փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը:
2016թ-ին Քաջարան համայնքին վճարել է 1538820 դրամ գումար՝ հողամասի վարձակալության վճար և 35981 հողի հարկ, ինչպես նաև գույքահարկ՝ 36300 դրամի չափով: Ամեն տարի հաշվարկել և վճարել է շահութահարկ և եկամտահարկ:

9. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

Ծրագրի շրջանակներում Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի շահագործման ազդակիր համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացվել են հարցումներ: Հարցման նպատակն էր պարզել ԱՃԹՆ–ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել է 11 անձ՝ 7 կին և 4 տղամարդ, այդ թվում նաև Քաջարանի համայնքապետարանի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետը և Նոր Աստղաբերդ և Գեղի բնակավայրերի վարչական ղեկավարը:

Նկարներ 4., 5., 6., Հարցազրույցներ ազդակիր բնակավայրերի ՏԻՄ ներկայացուցիչների հետ

Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ հարցման մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշում են աշխատատեղերի բացակայությունը, նախկին կոլեկտիվ տնտեսությունների կազմալուծման արդյունքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու անհնարինությունը, գյուղատնտեսական հողերի ոռոգման համար պահանջվող ջրի պակասը, միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:
- Հարցվածների գերակշիռ մասը կողմ է հանքավայրի շահագործմանը և ոսկու կորզման ֆաբրիկայի բացմանը, քանի որ աղքատությունից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա: Սակայն «Լեռ-էքս» ՍՊԸ-ի աշխատանքների հետևանքով նախկինում շրջակա միջավայրի վրա թողած բացասական օրինակը հաշվի առնելով՝ կարծում են, որ հանքավայրը շահագործող նոր ընկերությունը պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերը և պահանջների կատարումը, ինչպես նաև ընդերքօգտագործման պայմանագրով հանայնքի նկատմամբ ստանձնի սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորություններ:
- Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցության կապը չի կարողանում միանշանակ գնահատել հարցվածների հիմնական մասը: Բոլոր դեպքերում հարցվածներին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը:
- Ըստ Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչի «Լեռ էքս» ՍՊԸ-ի կողմից աշխատանքների դադարեցումից հետո աշխատողները ներգրավվել են ԶՊՄԿ-ի աշխատանքներում և աշխատուժի կրճատում չի արձանագրվել:
- Հարցման մասնակիցները գտնում են, որ ներկա փուլում շրջակա միջավայրի աղտոտում տեղի չի ունենում, քանի որ հանքավայրը չի շահագործվում: Սակայն «Լեռ-էքս» հանքավայրի շահագործման ժամանակ պոչամբարից տհաճ հոտ էր արձակվում, այնտեղից Գեղի գետ արտահոսքերի հետևանքով գետի գույնն ուներ դեղին կամ կաթնավուն գույն: Ներկայումս պոչամբարը գրեթե չոր է, գետի ջուրը մաքրվել է, օդը մաքրվել է, լավացել է ջրի որակը: Այնուամենայնիվ հարցվածներն իրենց առողջապահական խնդիրները դժվարանում են կապել հանքարդյունաբերության հետ:
- Առողջական խնդիրներ ունենալու ժամանակ բնակիչներըն օգտվում են տեղի բուժ կետից, որի սպասարկման ծառայությունից գոհ են հարցվածների զգալի մասը: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:
- Համայնքի ղեկավարն, ըստ էության չէր տիրապետում ընկերության կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակության պարտավորությունների, այդ մասով կատարած մասնահանումների, կատարված սոցիալական օժանդակության, տեղական հարկերի և տուրքերի վերաբերյալ տեղեկատվությանը, քանի որ այդ մասին մեր բարձրացրած բոլոր հարցերին տվեց դրական պատասխան,
- Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչը նշեց, որ ընդերքօգտագործման պայմանագիրը կնքելիս համայնքը ներգրավված չի եղել դրա շուրջ ընթացող քննարկումներին և չի արտահայտել իր դիրքորոշումը:
- Քաջարանի համայնքապետարանի Քաջարանի համայնքապետարանի

բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետը նշեց, որ հայ-ադրբեջանական պատերազմի զինադադարի պայմաններում հանրապետությունում առաջացած նոր՝ բանակի վերականգնման, երկրի կայունացման մարտահրավերներին զուգահեռ, համայնքում նույնպես առաջացել են հրատապ լուծման ենթակա նոր՝ քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման, Արցախից տեղահանվածների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ: Հետագա վտանգների կանխարգելման նպատակով կարևորեց նաև Արծվանիկի պոչամբարի անվտանգության գնահատումը, անհրաժեշտության դեպքում նաև ամրացումը:

Ազդակիր համայնքների բնակչության առաջարկներն են.

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Ազդակիր բնակավայրերն ապահովել մաքուր խմելու ջրով:
2. Հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
3. Անցկացնել հողերի, ջրերի մոնիտորինգ աղտոտվածության մակարդակը ճշտելու համար:
4. Բնակչության շրջանում կազմակերպել էկոկրթական դասընթացներ, մշակել և ներդնել էկոմշակույթի բարձրացման մեխանիզմներ:
5. Բարձրացնել ազդակիր տարածքներում գործունեություն իրականացնող հանքարդյունահանող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության մեխանիզմները, ստեղծել արդյունահանող-համայնք համատեղ կառույց/մարմին, և նրան վերապահել համակարգման լիազորություններ:

Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Վերանորոգել ճանապարհները:
2. Ապահովել բավարար միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցություն:
3. Բնակավայրերում հիմնել տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր և աշխատատեղեր:
4. Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքները, վարչական շենքերը, դպրոցները համալրել նոր և պիտանի անհատական պաշտպանիչ պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակն ու անվտանգութունը, զոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:
5. Հանքարդյունաբերությանը զուգահեռ ստեղծել նախադրյալներ փոքր գյուղատնտեսության և և էկոտուրիզմի զարգացման համար:

10. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել / չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ

օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մաս /:

2. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
3. Այս Ընկերության, ինչպես նաև մի քանի այլ ընկերությունների համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել, ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի, ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում է:
4. «Լեռ-էքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, տարիներ շարունակ կատարվող լեռնակապիտալ աշխատանքներում օգտագործվող փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը չի վճարել: Ընկերությունը խախտել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի[12] պահանջները: Չնայած սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2) կետը սահմանում է, որ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարող կազմակերպությունն այս հարկատեսակը պետք է վճարի իր հաշվառման վայրի համայնքի բյուջե, այնուամենայնիվ «Լեռ-էքս» ՍՊԸ-ն գրանցված լինելով ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում (Ստեփանյան փողոց, թիվ 6), համայնքային բյուջե է վճարել միայն շենք-շինությունների համար սահմանված գույքահարկը, չվճարելով փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը: Այստեղ առկա է օրենսդրական բաց, քանի որ այդ փոխադրամիջոցների գործունեության բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում են տեղի բնակչությունը, և որ այդ օրենքում պետք է ամրագրվեն համապատասխան կարգավորող դրույթներ:
5. Չնայած կազմակերպության ընդերքօգտագործման պայմանագրի մեջ նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, կազմակերպությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
6. Ընդերքօգտագործման պայմանագրում չեն ամրագրվել հանքի փակման միջոցառումների և հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքնե, ինչը ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման պահանջների խախտում է:
7. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված՝ զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:

[12] https://www.arlis.am/

8. ԱՃԹՆ համակարգն ունի պատկան մարմինների և ընդերքօգտագործողների հաշվետվությունների հավաստիության և իդենտիկության ճշգրտման խնդիր:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: